



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 20.01.16 թ.
Ելք № 003

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք Ձեզ, որ չնայած հարկային ոլորտում իրավակիրառական գործընթացում առկա խնդիրների, հարկ վճարողները հաճախ ձեռնպահ են մնում ուղղակի դիմել և իրենց հարցադրումները ցանկանում են ներկայացնել հասարակական կազմակերպությունների միջոցով:

Այդ կապակցությամբ կից ներկայացվում է հարկ վճարողի գրությունը և խնդրում ենք պարզաբանել բարձրացված հարցերին:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան

1. Հայաստանյան կազմակերպությունը եկամուտներ է վճարում ԼՂՀ-ում Հադրութ քաղաքում գրանցված կազմակերպությանը: Նախկինում ԼՂՀ կազմակերպությունը շահութահարկի հմաստով դիտարկվում էր որպես սովորական ոչ ռեզիդենտ կազմակերպություն և աղբյուրի մոտ պահում էր կատարվում ՇՄ օրենքի ընդհանուր կարգով: Մեր ունեցած տեղեկատվությամբ 2014թ. հունվարի 1-ից հետո կատարված գործարքների պարագայում մոտեցումը փոխվել է և այլևս հայաստանյան իրավաբանական անձից չի պահանջվում աղբյուրի մոտ պահում կատարել, երբ որ նա ակտիվ կամ պասիվ եկամուտներ է վճարում դարաբաղյան իրավաբանական անձին: Միաժամանակ, ըստ մեր տեղեկության, այդ նույն ամսաթվից սկսած հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների մասով հադրության կազմակերպությունը շահութահարկ է վճարում ԼՂՀ-ում, սակայն կիրառելով ոչ թե ԼՂՀ-ում սահմանված 10 տոկոս դրույքաչափը, այլ հայաստանյան օրենքով սահմանված 20 տոկոս դրույքաչափը:

2. Հայկական իրավաբանական անձը վարձակալական վճար է վճարում ԼՂՀ Շուշի քաղաքում վարձակալված տան օգտագործման դիմաց ֆիզիկական անձին: ԼՂՀ օրենսդրությամբ ԼՂՀ-ում վճարվում է եկամտային հարկ. արդյոք նաև ՀՀ-ում պետք է «եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն կատարվի եկամտային հարկի վճարում եկամուտ վճարող իրավաբանական անձ հայկական հարկային գործակալի միջոցով, թե՛ ոչ:

Մեր կարծիքով այդպիսի հարկ ՀՀ-ում չի առաջանում, քանի որ գույքը գտնվում է ՀՀ սահմաններից դուրս ԵՀՄ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն հայաստանյան աղբյուրներից եկամուտ է համարվում ՀՀ-ում գտնվող գույքը վարձակալության տալուց եկամուտը: Տվյալ դեպքում ԼՂՀ բնակիչը վարձակալության է տվել Շուշի քաղաքում գտնվող գույքը:

Ընդ որում որոշակի հակասություն կա օրենքի 11 հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի հետ, որը պահանջում է պահում: Անհասկանալի է, քանի որ հայաստանյան հարկային գործակալը չի կարող որոշել եկամուտ ստացողի ռեզիդենտ լինել, չլինելու հանգամանքը:

Մեր կարծիքով ԼՂՀ դեպքում ևս, ինչպես և այլ դեպքերում, ԵՀՄ ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն վարձակալական վճարից եկամտային հարկ կգանձվի այն դեպքում, եթե 9-րդ հոդվածի համաձայն այդ եկամուտը համարվի հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտ: